ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ

ՀՐԱՄԱՆ

№ 098/2017-Ա

«28» հունիսի 2017թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԽՄԲԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի կողմից 21.02.2017թ. թիվ 3 որոշմամբ հաստատված Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2017թ. ուսուցման ծրագիրը և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անցկացման կարգը, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 23.03.2017թ. թիվ 15/22/157-17, 27.03.2017թ. թիվ 15/232-17, 02.05.2017թ. թիվ 15/3042-17, 08.06.2017թ. թիվ 15/4046-17, 09.06.2017թ. թիվ 15/27344-17 և 19.06.2017թ. թիվ 15/27885-17 գրությունները՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 1-ին խմբի բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2-րդ խմբի բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 3-ի:

Ռեկտոր՝ **Ս. Առաքելյան**